



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2024

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ ԻՄԱՍՏՐՈՒԹԻՒՆ ՎԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻ. ԵՆ ողորմեա քո արարածոց եւ Ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՓՐԿՈՒԹԵԱՆԴ ԿԸ ԿԱՐՕՏԻՄ

Փրկութեանդ կը կարօտիմ,
եւ իմ յոյսս խօսքիդ վրայ դրեր եմ:
Աչքերս յոգնեցան քու խոստումիդ կապարումին սպասելէն,
եւ հարց կու փամ.- Ե՞րբ պիտի զիս հանգստացնես:
Ծուխէն սեւցած փիկի մը պէս անպէտ դարձայ,
բայց կանոններդ չհանեցի եւ մտքէս:
Ո՞րքան պիտի ապրիմ դեռ ես՝ քու ծառայ.
Ե՞րբ դաբաստանի պիտի ենթարկես անոնք՝ որ զիս կը հալածեն:
Ամբարտաւան այդ մարդիկը ինձի փոսեր փորեցին,
որովհետեւ յարգանք չունին Օրէնքիդ հանդէպ:
Քու բոլոր պատուերներդ ճշմարիտ են.
սուտ պատճառներով կը հալածեն զիս, օգնէ ինձի:
Քիչ կը մնայ որ աշխարհէն վերցնես զիս.
բայց ես հրահանգներդ երբեք չեմ մոռնար:
Քու սիրովդ կեանք փուր ինձի,
որպէսզի ես կարենամ քու սահմանած պատուիրաններդ պահել:

ՇԱՐԱԿԱՆ

Խաչըն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն.

սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

Որ Ի Հօրէ լուսոյ ըյս ճառագայթեալ ի յերկրի, եւ գաւազան զօրութեան
Հաւատացելոց. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

ԱՊՈԹՔ

Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր Յիսուս, յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս: Յայնժամ մեք մի՛ ամաչեցուք յուսացեալքս Ի քեզ, այլ գորութեամբ քով մեճաւ բերկրեցուք ընդ աջմէ քումմէ որպէս գորդիս լուսոյ եւ որդիս փունջեան:

Քու Խաչդ թող ապաւեն ըլլայ մեզի, Տէր Յիսուս, երբ Հօրը փառքով երեւիս լուսաւոր ամպերու վրայ: Այն ժամանակ թող ամոթով չմնանք մենք՝ Քեզի յուսացողներս, այլ Քու մեճ գորութեամբդ ուրախանանք՝ Քու աջ կողմդ բազմած՝ որպէս լոյսի որդիներ եւ փրկութեան ժառանգորդներ:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X 3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան գՏեր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տեր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՐՈՐՔ

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղէրոց:

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 68

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ

Օրինեալ է Տերը, մեր փրկիչ Աստուածը, որ օրը օրին մեր հոգերը կը կրէ:

Մեր Աստուածը փրկիչ Աստուած է, Տերը, մեր Տերը ինքն է որ մահուրնէ կ'ազապէ:

Սակայն Աստուած պիտի փշրէ իր թշնամիներուն գլուխը,

պիտի փշրէ գիսաւոր գագաթը անոնց՝ որոնք կը յարապետեն իրենց յանցանքներուն մէջ:

Տերը ըսաւ.- «Քեզ եր պիտի բերեմ Բաշանէն, դուրս պիտի բերեմ ծովուն խորերէն,

որպէսզի ուրբերդ թշնամիներուդ արեան մէջ թաթախես,

եւ շուներդ ալ արիւնէն իրենց բաժինը լակեն»:

Ահա հանդիսաւոր թափօրդ կը տեսնուի, ով Աստուած.

իմ Աստուծոյս, իմ Թագաւորիս հանդիսաւոր թափօրը, որ սրբարան կը մտնէ:

Նախ երգողները կու գան, ամենէն վերջը՝ դափ զարնող աղջիկները:

Հաւաքոյթներուն մէջ օրինաբանեցէք զԱստուած,

Իսրայէլի ակէն սկսեալ օրինաբանեցէք Տերը:

Հոն է Բենիամինը, ցեղերուն կրտսերագոյնը, որ թափօրը կ'առաջնորդէ,

հոն են Յուդայի իշխանները, իրենց լրիւ կազմով,

հոն են Զեբուլունի եւ Նաֆթալիի իշխանները:

Յոյց փուր, ով Աստուած, քու զօրութիւնդ, այն զօրութիւնդ, ով Աստուած,

որ անցեալին ցոյց փուրի մեզի քու փաճարէդ, Երուսաղէմէն,

ուր թագաւորներ քեզի ընծայ պիտի բերեն:

Սաստե Եգիպտոսը, եղէգնութիւն մէջ ապրող այն գագանը,

սաստե ազգերը, ցուլերու այն երամակը՝ իրենց հորթերով միասին,

որոնք արծաթի սիրոյն ժողովուրդներ կ'ոտնակոխեն:

Յրուէ այն ազգերը, որոնք պատերազմ կը կամենան:

Եգիպտոսէն դեսպաններ պիտի գան,

Եթովպիան պիտի փութայ աղօթքով իր ձեռքերը Աստուծոյ բարձրացնել:

Ով աշխարհի թագաւորութիւններ, երգեցէք ի պատիւ Աստուծոյ,

ներբող երգեցէք Տիրոջ, անոր՝ որ յաւիտենական երկինքներէն վեր՝

իր կառքին վրայ նստած է, եւ իր հզօր ձայնը կը թնդացնէ:

Հռչակեցէք՝ թէ զօրութիւնը Աստուծոյ է.

իր ժողովուրդին վրայ մեծափառ թագաւորն է ան,

որ երկինքէն կը յայտնէ իր զօրութիւնը:

Ահաւոր ես դուն, ով Աստուած, քու սրբարանիդ մէջ:

Իր ժողովուրդին Աստուածն է ան, որ ոյժ ու կարողութիւն կու տայ իր ժողովուրդին:

Օրինեալ է Աստուած:



ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ 19-35

Կը շարունակենք: Դաւիթ նախ փառք կու փայ Աստուծոյ, այն Աստուծոյն որ փրկիչ Աստուած է, փառք կու փայտր օրը օրին մեր հոգերը կը կրէ: Այսպէղ պարզ մեր առօրեայ հոգսերուն մասին չէ խօսքը, այլ մեղքին պարճառած լուծը, որ իր վրայ կրեց ու ամէն օր կը կրէ, երբ ամէն անգամ վստահութեամբ, գոջումով եւ ապաշխարութեամբ իրեն կը դիմենք եւ ներում կը խնդրենք: Ահա թէ ինչու շարունակելոց Դաւիթ կ'ըսէ. «Փրկիչ Աստուած է, որ մահուրնէ կ'ազապէ»: Մեղքը որ մահուան կ'առաջնորդէ, ահա այդ մահէն կը փրկէ: Բայց նոյն Աստուածը իր թշնամիներուն գլուխը պիտի փշրէ: Այն թշնամիներուն որոնք կը յարատեւեն իրենց յանցանքներուն մէջ: Այսինքն՝ պահը պիտի գայ երբ այդ թշնամիները, որոնք երբեք ալ չապաշխարեցին ու դարձի չեկան անոնց վերջնական անկումը:

Ահա Դաւիթ ցոյց կու փայ թէ Տէրը դուրս պիտի բերէ, եւ ուրքերդ թշնամիներունդ արեան մէջ թաթախես: Պարկերացումն է կոխկրտելու, թշնամիներուն գլուխը ջախջախելու: Որմէ ետք կը պարկերացնէ հանդիսաւոր թափօրը, որ յաղթանակի մուտքն է սրբարան: Այն թափօրը որ Քրիստոս իր խաչե-լուծեամբը, թաղմամբ ու մանաւանդ՝ յարութեամբ այդ յաղթանակը փարաւ եւ սրբարան մտաւ: Եւ այս յաղթանակը ոչ միայն Իսրայէլի սերունդներուն համար է, այլ բոլոր անոնց որոնք Իրեն կը դիմեն:

Դաւիթ կը խնդրէ, ինչպէս անցեալին այդ յաղթանակը ցոյց փուաւ, դարձեալ Աստուած ցոյց փայ այդ յաղթանակը: Երբ Աստուած դարձեալ իր գօրութիւնը ցոյց պիտի փայ, սասպելով Եգիպտոսը, նմանցնելով գազանի, եւ ազգերը՝ ցուլերու, իրենց հորթերով միասին, որոնք արծաթսիրութեան պար-ճառով ժողովուրդներ կ'ոտնակոխէին: Ի տես այս երեւոյթին, շապեր դարձին պիտի գան եւ աղօթքով իրենց ձեռքերը բարձրացնեն առ Աստուած:

Ահա ժամանակներ պիտի գան երբ աշխարհի թագաւորութիւններն ալ ի պապիւ Աստուծոյ ներքող երգեն ու հռչակեն թէ գօրութիւնը Աստուծոյ է, որ Իր ժողովուրդին մեծափառ թագաւորն է: Իր ժողովուրդին ոյժ եւ կարողութիւն փուուղն է:

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*